

ՀԱՂԱՌՐԴՈՒԹՅՈՒՆԵՐ

ԱՐՄԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹԻ ԽԱՉԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՆԵՐՔՈՂԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ «ՏՕՆԱՊԱՏՃԱՌ» ԺՈՂՈՎԱԾՈՒՈՒՄ

Դավիթ Անհաղթ փիլիսոփայի «Բարձրացուցեք» խորագրով հայտնի «Ներբողան ի սուրբ խաչն աստուածընկալ» երկի հեղինակի, ստեղծման ժամանակի եւ պատմական միջավայրի մասին հիմնական տեղեկություններն ստանում ենք Ներբողի Նախադրությունից, Գյուտ Ա. Արահեզացի (461-478) Կաթողիկոսի եւ Դավիթ փիլիսոփայի նամակներից¹, ինչպես նաեւ Վարդան Հաղբատեցու, Դավիթ Քոբայրեցու հեղինակած եւ Գրիգոր Աբասյանի խմբագրած «պատճառ»-ներից²: Դավիթ Անհաղթի մատենագրության վեներաբլյան հրատարակության մեջ արտացոլված չէ այն փաստը, որ հիշյալ Նախադրությունը եւ նամակները հիմնականում հանդիպում են «Տօնապատճառ» ժողովածուում, որում, բացի տոների խմաստներից, ներկայացվում են եկեղեցական մատենագրության մեջ մեծ նշանակություն ունեցող երկերի ստեղծման շարժառիթները եւ փոքր մեկնություններ³:

Նշված նախադրությունը եւ նամակներն ընդգրկված են *Խաչի տոնի պատճառի* մեջ, որը հանդիպում է հետեւյալ խորագրերով. «Ի տաւնի սրբոյ եւ փառաւոր Խաչին Քրիստոսի ի Բանն Դաւթի, որ ասէ. Արինեալ ես աստուածազարդ եւ քրիստոսապսակ փայտ»⁴, «Ի տաւնի սրբոյ խաչին ասացեալ սուրբ վարդապետաց»⁵, «Պատճառ ամենայաղթ սուրբ խաչին Քրիստոսի ի Բարձրացուցեքն»⁶, իսկ երբեմն վերնագրված է լինում «Բարձրացուցեք»-ից մեջբերված «Արինեալ ես աստուածա-

1 Տե՛ս «Դաւթի Անյաղթ փիլիսոփայի մատենագրութիւնը եւ թուղթ Գիւտայ Կաթողիկոսի առ Դաւիթ», Վեներտիկ 1932, էջ 5-8:

2 Տե՛ս Ա. ՄԵՔՐՈՅԱՆ, Դավիթ Անհաղթ փիլիսոփայի «Ներբողեան ի սուրբ խաչն աստուածընկալ» երկի «պատճառ»-ները, «Պատմաբանասիրական հանդես», 2013, թ. 2:

3 «Դատելով «Տօնապատճառ»-ի թեմատիկայի առավելապես տեսական հենքից ու բովանդակության բարձր մակարդակից, շարադրանքի բարդ եղանակից, ընդհանուր գիտականությունից եւ ուսուցողական միտումից», Փ. Անթապյանը, կարծում է, որ այն նախատեսված է եղել բարձրագույն դպրոցների սաներին եւ եկեղեցական կոչում ընդունած հոգևորականներին համապատասխան գիտելիքներով օժտելու համար (տե՛ս Փ. Անթապյան, Վարդան Արեւելցի, կյանքն ու գործունեությունը, գիրք Բ., Երևան, 1989, էջ 172-173):

4 Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ), ձեռ. 4139, թ. 343բ:

5 ՄՄ, ձեռ. 3931, թ. 262ա:

6 ՄՄ, ձեռ. 3524, թ. 148ա:

գարդ քրիստոսապսակեալ փայտ սուրբ» արտահայտությամբ⁷։ Բոլոր օրինակներում *Խաչի տոնի պատճառն* ունի հետեյալ սկզբածրը. «Ամենայն բարեկամի եւ սիրելի գալուստ ուրախարարք եւ տրամախալածք են...»։ Հեղինակն այլաբանորեն ներկայացնում է տոնի խորհուրդը եւ նպատակը՝ անձնավորելով Խաչը՝ որպէս բարեկամ, որ, սպանելով չարին, մարդուն դժոխքից դրախտ տեղափոխեց։ Ուստի այդ «աստուածունակ բարեկամի» գալուստը պետք է սրտի ուրախությամբ եւ մեծ տոնախմբությամբ ընդունել⁸։ Խաչին գոհություն եւ օրհնություն մատուցելու հորդորից հետո անդրադարձ է կատարվում տոնի խորհրդին եւ նախապատմությանը։ Ներկայացվում է Երուսաղեմի առաջին եպիսկոպոս Հակոբոս Տյառնեղբոր օրոք Տիրոջ Խաչափայտի գյուտի եւ Պատրոնիկէ թագուհու հետ կապված ավանդությունը⁹, ինչպես նաեւ Կոստանդիանոսի մոր՝ Հեղինէ կայսրուհու շնորհիվ (327թ.) Խաչի երկրորդ գյուտի պատմությունը։ Հետաքրքրական է, որ «Տօնապատճառ»-ում արտացոլված է «Խաչվերաց»-ի տոնի միայն նախնական պատկերը։ Ինչպես ցույց է տվել Մ. Ավգերյանը, Խաչվերացն ավելի հին է, քան Հերակլ կայսեր օրոք Խաչի՝ պարսկական գերությունից ազատագրվելը։ Ավելի վաղ շրջանի մատենագիրները հիշատակում են սեպտեմբերի 14-ին սահմանված այս տոնը՝ «վերացումն կամ բարձրութիւն խաչի անուանեալ»¹⁰։ Ի դեպ, ըստ Ավգերյանի Դավիթ Անհաղթն էլ իր ճառն սկսում է «Բարձրացուցէք» բառով՝ ի մտի ունենալով Խաչվերացի տոնի խորհուրդը։

Խաչի տոնի վերաբերյալ պատմական ակնարկն ավարտվում է ավետարանական խոսքի հետևողությամբ. «Վկայէ եւ Յովհաննէս, թէ այնչափ սիրեաց աստուած զաշխարհ, մինչ զմիածին զարութիւնն ետ ի խաչն վասն մեր եւ ինքն յանասելի սիրոյն պարտական ասաց բարձրանալ ի խաչ որպէս Մովսէս զառն յանապատին»¹¹։ Հետեյալ՝ «Ժամ է այսուհետեւ արհնութեան եւ ներբողինի խաչին պարապել, որ սիրելի է մեզ եւ [ը]դձալի այնպիսում առն ասացած, որ է փառք ազգիս եւ պարծելի եւ սուրբ որդի Հայաստանեայցս եկեղեցեաց Դաւիթ փիլիսոփայի ասացեալ, որ լիապէս գիտէ...»¹² մուտքով սկսվում են Ներբողի Նախադրությունը, Գյուտի եւ Դավթի նամակները։ Մույն հոդվածում նպատակ չունենք անդրադառնալու սրանց ըննությամբ։ Միայն նշենք, որ հրատարակված տարբերակի «Դաւիթ փիլիսոփա ասացեալ...» սկզբածրի փոխարեն, մեր ուսումնասիրած ձեռագրերում «Դաւիթ փիլիսոփա»-ն գրված է սեռական հոլովով. «Ժամ է այսուհետեւ արհնութեան ներբողինի խաչին պարապել... Դաւիթ փիլիսոփայի ասացեալ («Դաւթի փիլիսոփայի ասացեալ»¹³), որ

7 Տե՛ս ՄՄ, ձեռ. 3082, թ. 292բ։

8 Տե՛ս ՄՄ, ձեռ. 4139, թ. 344ա։

9 Տե՛ս «Թանգարան հայկական հին եւ նոր դպրությանց», Գ., Վենետիկ, 1904, էջ 453-456, Ա. Տիգրանեան, Խաչվերացի տոնի ավանդությունները. «Գանձասար», Զ., Երեւան, 1996, էջ 110-131։

10Մ. Աւգերեան, Լրումն լիակատար վարուց եւ վկայարանութեանց սրբոց, հտ. ԺԱ., Վենետիկ, 1814, էջ 209-210։

11 Հմմտ. Յովհ. Գ. 14-16. «Եւ որպէս Մովսէս բարձրացոյց զօձն յանապատին, նոյնպէս բարձրանալ պարտ է Որդոյ մարդոյ... Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչեւ զՈրդին իւր միածին ետ»։ Հեղինակն ավելացրել է «եւ ի խաչն», «բարձրանալ ի խաչն» արտահայտությունը՝ համապատասխանեցնելով տոնի խորհրդին։

12 ՄՄ, ձեռ. 4139, թ. 346ա։

13 ՄՄ, ձեռ. 3931, թ. 265բ։

լիապես գիտե՞լ գտեսական...»¹⁴, այսինքն՝ Ներբողը, որ հորինել է Դավիթ փիլիսոփան: Հավանաբար հրատարակիչներն իրենք են կատարել այս փոփոխությունը՝ տպագրելով նախադասության կեսից, ինչն իմաստային տեսակետից հստակ չէ եւ երբեմն շփոթի տեղիք է տալիս¹⁵:

«Տօնապատճառ»-ում Դավիթ Անհաղթի նամակի վերջում գետեղված «Բարձրացուցէք»-ի գրության ժամանակի վերաբերյալ փոքրիկ տեղեկությանն անմիջապես հաջորդում է Ներբողի՝ «Օրհնեալ ես» բառով սկսվող գոհաբանական մասից վերցված մի հատվածի մեկնությունը¹⁶: Հեղինակը նախեառաջ անդրադառնում է «Դավիթ» անվան բացատրությանը. «Դավիթ ինքնաբայ թարգմանի եւ կամ սիրելի եւ կամ կոզո պտուղ»¹⁷: Ներկայացվում է, թե ինչ է «Ներբողեան»-ը. «ոմանք ինքնասացութիւն ասեն եւ կէսք գովասանութիւն, եւ այլք խորախասութիւն, բայց Գրիգոր Նեւսացի՝ բերկրումն անուանէ ի ճաթին, որ առ սուրբ հայրն Եփրեմ»¹⁸: «Բարձրացուցէք»-ը համեմատվում է Գրիգոր Նազիանզացու «Քրիստոս ծնեալ» ճաթի հետ: Եւ եթե «Քրիստոս ծնեալ ճաթն պատշաճ է ի Ծնընդեան աւուրն, ապա այսաւր կարի պատեհագոյն է աստի խասել, որ ոչ է պակաս քան զայն ի զարութենէ մտաց եւ յաւգուտ լսաղացն եւ ի պայծառութիւն տաւնական աւուրս»¹⁹: Խաչի համար կիրառվող «աստուածընկալ» բառը մեկնիչը գործածում է Դավիթ Անհաղթի միաբը բնորոշելու համար. «Զողորմութեամբն Աստուծոյ բերան եղեալ աստուածընկալ մտացն Դաւթի ասացուք ընդ նմա այսպէս»²⁰: «Բարձրացուցէք»-ից «Արինեալ ես աստուածագարդ քրիստոսապսակ փայտ սուրբ» բառերի մեջբերմամբ, փաստորեն, սկսվում է այդ հատվածի մեկնությունը: Բացատրելու համար, թե ինչու է Դավիթ Անհաղթն օրհնում Խաչը, հեղինակը մանրամասնում է, որ օրհնությունն Աստուծոց ստացած կամ ակնկալվող պարգևների համար արվող գոհությունն է: Հին Կտակարանում Դավիթ մարգարեն թշնամիներից պաշտպանվելու, Մովսեսը՝ փարավոնի զորքերից ազատվելու, իսկ Դեբորան եւ Բարակը Միսար գորավարին հաղթելու առթիվ օրհնեցին Աստծուն²¹: Վկայակոչելով Դիոնիսիոս Արիսպագացու «յայտնաբանութիւն ասի արինութիւնն» խոսքը՝ նա ասում է, որ Աստծուն պետք է օրհնել, երբ Նրա գորությունը հայտնվում է հրաշքների իրագործմամբ: Այս օրինակներից հետո հեղինակն անդրադառնում է Դավիթ Անհաղթին. «Այսպէս սուրբս այս տեսեալ զանթիւ պարգեւաց մեզ առիթն եղեալ եւ զյուսացեալն, տա արինութիւն ահաւոր նշանիս»:

14 ՄՄ, ձև. 4139, թ. 346ա:

15 Օրինակ՝ ֆրանսերենում այն թարգմանվել է. «Paroles du philosophe David, qui connaît complètement...», այսինքն՝ «Դավիթ փիլիսոփայի խոսքերը, որ լիապես գիտի...» (տե՛ս J.-P. Mahé, “David l’Invincible dans la tradition arménienne”, *Simplicius, Commentaire sur les Catégories, traduction commentée sous la direction de Ilsetraut Hadot, fasc. 1*, Leiden, New York, Kobenhavn, Köln: E.J. Brill, 1990, p. 191. V. Calzolari, “Un philosophe ‘Invincible’: Le néoplatonicien David”, *Illuminations d’Arménie. Art du livre et de la pierre dans l’Arménie Ancienne et Médiévale*, sous la direction de Calzolari V., Erevan, 2007, p. 196.):

16 Մեկնության վերլուծությունը ներկայացնում ենք ըստ 1267 թ. Հաղբատում ընդօրինակված, Վարդան Արեւելցու խմբագրությունը համարվող Մատենադարանի 4139 թվահամարի «Տօնապատճառ»-ի:

17 ՄՄ, ձև. 4139, թ. 347ա:

18 Անդ:

19 Անդ, թ. 347աբ:

20 Անդ, թ. 347բ:

21 Հմմտ. Սաղմ., ԺԷ. 4, Ելից, ԺԵ. 1, 21, Դատ., Ե. 1-3:

Ըստ մեկնիչի՝ Խաչին պետք է տալ Աստծուն վայել երկրպագություն, քանի որ այն «աստուածունակ», «քրիստոսաշնորհ», «աստուածափառ» և «քրիստոսապատիւ» է²²: «Աստուածազարդ խաչ» արտահայտությունը նա հասկանում է որպես «ժայռազարդ, զի Հայր զարդարեաց զսա, որով և զՈրդի իւր փառաւորեաց սովա»²³: Իսկ «քրիստոսապատիւ» բառի համար տալիս է հետևյալ բացատրությունը. թագավորները ոսկով և թանկարժեք քարերով պատված պսակ են կրում: Խաչի համար պսակ դարձավ ինքը՝ Քրիստոսը, որ Արարիչն է ողջ գոյության և, իրենով պսակելով Խաչը, հիմնեց իր եկեղեցին: Այդ իսկ պատճառով բոլոր եկեղեցիների գագաթին այժմ երևում է այդ Խաչը՝ որպես «զայաժառանգեալ պսակ արքունական»²⁴: Դավիթ Անհաղթը Խաչն անվանում է «փայտ», որն ըստ մեկնիչի, «առաքինութեան նշանակ» է²⁵: Փայտի «առաքինությունը» ցույց տալու համար նա վկայակոչում է Փիլոն Եբրայեցուն. «Ըստ Փիլոնի Բ. (2)-ու են առաքինութիւն փայտի՝ քաջուղեշ և պողեղ գոլ»²⁶ և ավելացնում՝ «այլև անփուտն»²⁷: Փայտը կարող է մշակվելուց, հղկվելուց և քանդակվելուց հետո կիրառվել այլ նպատակներով: Սակայն, սուրբ Նշանը «առաքինանում» է ո՛չ բնության և ո՛չ էլ ճարտարների միջոցով, այլ՝ «Աստուծով ճոխանա»²⁸: «Խաչ» բառի նշանակությունը մեկնիչը բացատրում է Դավիթ Անհաղթի՝ «Բարձրացուցէք»-ում տրված դրույթների հետևողությամբ: Փայտը խաչի բնական անունն է, իսկ սեռական (մասնավոր, հատուկ) հատկանիշը հայտնի չէ, թեև ոմանք այն կիպարիս են համարում (ըստ ավանդության՝ Խաչափայտը պատրաստված է եղել կիպարիսից): Ձեռականն այն է, որ Խաչը մահվան գործիք է, իսկ իմացական հատկանիշը ցույց է տալիս, որ այն «աստուածախաչ» է: «Փայտ սուրբ» արտահայտությունը մեկնելիս՝ նա համեմատում է Երից սրբասացության հետ: Հին կտակարանում Աստծուն փառաբանող սերովբեներն²⁹ այժմ աներեւութաբար և անլուր կերպով եռախյուսակ սրբասացությունը երգում են «վերերելոյն Աստուծոյ»³⁰: Այստեղ հիշատակվում է նաև այն, որ Հայ եկեղեցու կողմից ընդունված Երից սրբասացության բանաձևը հաստատվել է Եփեսոսի տիեզերաժողովում:

Խաչը լիովին արժանի է այն օրհնությանը, որ տրվում է Աստծուն, որովհետև բոլոր շնչավորների և անշունչների, կենդանիների և անկենդանների միջից միակն է, որ արժանացավ աստվածային անճառելի շնորհին: Հետաքրքրական են նաև հեղինակի բնագիտական հայացքները: Նա անգամ բույսերին և կենդանիներին բաժանում է մարդու եռամասն կազմության սկզբունքով: Ըստ նրա՝ շնչավորները լինում են երեք տեսակի: Առաջինը շնչավոր տունկերն են («շնչաբոյս տունկը»), որոնք ունեն «սերմնական, բուսական և աճեցական» գորություն: Երկրորդը գազաններն են և

22 ՄՄ, ձեռ. 4139, թ. 347բ, 349բ:

23 Անդ, թ. 347բ:

24 Անդ, թ. 348ա:

25 Անդ:

26 Հմմտ. «Փիլոնի Եբրայեցոյ Մնացորդք ի Հայս, որ են մեկնություն ջննդոց, և Ելից. ճառք ի Սամփսոն, ի Յովնան և յերիս մանկունս կամ ի հրեշտակս», աշխատ. Հ. Մ. Ազգերեանց, Վենետիկ, 1826, էջ 6:

27 ՄՄ, ձեռ. 4139, թ. 347բ:

28 Անդ, թ. 348ա:

29 Հմմտ. Ես., Զ. 1-3:

30 ՄՄ, ձեռ. 4139, թ. 348ա:

անասունները, որոնք ունեն «տնկական, աճեցական եւ զգայական» գորություն: Բույսերին, զեռուններին, ճանճերին նա անվանում է «անշունչ եւ շնչատուր», որովհետեւ նրանք ունեն լինելիություն, շարժում, ընթացք եւ, թեւեւ կենդանի են, բայց «փոքր եւ հաղորդը կենաց»³¹: Ըստ մեկնիչի՝ Դավիթ Անհաղթը «կենդանի» ասելով նկատի ունի հրեշտակներին, դեւերին եւ մարդկանց, ինչպես նաեւ ծովում, ցամաքում եւ օդում գտնվող արարածներին: «Կենդան եւ անկենդան» են արեւը, լուսինը, աստղերը եւ լուսատուները («լույսը»), որ ունեն շարժում եւ ընթացք, ինչպես կենդանիները, սակայն չունեն «մասն կենաց ինչ»³²: Իսկ ծովը, գետերը եւ աղբյուրները, որոնք շարժվում են Արարչի հրամանով, կենդանաձին են, անշունչ եւ անկենդան: Քամին, հողմերը, որ առաջանում են օդից, երկրից եւ ծովից եւ ձայն են հանում, բնական գորությամբ շարժական են եւ անկենդան, սակայն կարողանում են շարժել անշարժ եւ շարժվող արարածներին: Մարդիկ եւ անասունները շնչավոր եւ կենդանի են, սակայն նրանց ոսկորները, մազերը, եղունգներն ու ճարպը անշունչ եւ անկենդան են: Աստվածային անճառելի շնորհի մասին խոսելիս հեղինակն արտահայտում է այն միտքը, որ պատմության ընթացքում տարբեր ազգեր եւ առանձին անհատներ արժանացել են Աստծու, ոչ թե անճառելի, այլ՝ ճառելի շնորհին: Օրինակ՝ աշխարհի մասին ճառել են պտղովմեականները եւ եգիպտացիները, աստղերի մասին՝ քաղեացիները: Հիշատակում է նաեւ զրադաշտական կրոնի հիմնադիր Զրադաշտին (ընդ որում՝ գործածվում է անվան հունարեն «Զորուաստրէս» տարբերակը) եւ Քսիսութրիոսին («Քսարաստրուստէս» ձեւով), որ Նոյի անունն է քաղեցրեւով: Փայտի մասին պատմել է Մոդոնոնը, իսկ ծովի մասին՝ Հովնան մարգարեն³³: Խաչի շնորհի մասին խոսեց Պողոս առաքյալը՝ ասելով «Ո՛ր խորք մեծութեան իմաստութեան»³⁴, ինչպես նաեւ Դավիթ Անհաղթը. «Ո՛ր խաւսեսցի զգարութիւնս Տեառն եւ զարութիւն սիրո Աստուծոյ առ մարդիկ դու միայն ես»³⁵: Խաչափայտի անճառելի շնորհը ցույց տալու համար խաչը նախ դասում է սովորական «փայտերի» («ընկերքն քո փայտքն»³⁶) շարքում, որոնք նույնպես ունեն շնորհ, քանի որ, օրինակ, դրանց արմատների կամ խիժերի միջոցով կարելի է բժշկվել մարմնական հիվանդություններից: Խաչը նման է մյուս փայտերին հասակով, գույնով, ողորկությամբ, սաղարթներով, ծաղկով եւ պտղով, սակայն միայն նրա միջոցով Արարիչը օրհնեց բոլոր երկրավորներին: Խաչը որպէս պարզեւ ձրիաբար տրվեց մեզ՝ փառավորվելով նրա վրա բարձրացած Քրիստոսի փառքով:

Դավիթ Անհաղթի՝ «մտավոր եւ բանավոր կենդանի» արտահայտությունը մեկնելիս հեղինակը նշում է, թե ոմանք «մտավոր» ասելով նկատի են ունենում հրեշտակներին, իսկ «բանավոր» ասելով՝ մարդկանց: Սակայն ճիշտ չէ հրեշտակներին անվանել մտավոր, քանի որ նրանք ամբողջովին *միտք* են եւ խաչին երկրպագելու համար խոնարհվում են իրենց ողջ էությանբ: Ըստ մեկնիչի՝ «մտավոր եւ բանավոր կենդանի» ասելով Դավիթ Անհաղթը նկատի ունի միայն մարդ արարածին. «գի բա-

31 Անդ:

32 Անդ:

33 Հմմտ. Առակ., Գ. 18, Յովն., Ա. 1-16:

34 Տե՛ս Հռովմ., ԺԱ. 33:

35 Հմմտ. Դավթի Անյաղթ փիլիսոփայի Մատենագրութիւնք, էջ 12:

36 ՄՄ, ձև. 4139, թ. 348բ:

նաւոր եւ մտաւոր պատկեր այն ասի Աստուծոյ, որ խոհական մտաւք եւ լուսաւոր խորհրդով հաւել կարէ ի փառս Խաչին»³⁷: Իսկ կուրամիտ մարդիկ, որոնց վրա չի ծագել Ավետարանի լույսը, հավասար են անբանական ու մարդադեմ գազանի, եւ որոնց Պողոս առաքյալն անվանում է Քրիստոսի Խաչի թշնամիներ³⁸: Մեկնելով Դավթի այն միտքը, որ Խաչը միաժամանակ թե՛ երկրի վրա է եւ թե՛ երկնքում, հեղինակը կրկին օրինակ է բերում բնությունից՝ ասելով, որ արեւը եւ լուսինը, երբ որ ներքին կիսագնդում են, վերելում լինել չեն կարող, եւ հակառակը: Սակայն Խաչը միաժամանակ լցնում է թե՛ երկիրը եւ թե՛ երկինքը, քանի որ իր վրա կրում է անբավ եւ անփոփոխ աստվածային բնությունը: Քրիստոսապասկ փայտը մյուս տունների նման բուսնեց երկրի վրա, սակայն արմատացավ Եկեղեցու մեջ եւ հավատացյալների սրտերում խոր արմատներ ձգելով՝ բոլոր արարածներից վեր բարձրացավ: Խաչը ծաղկեց Իսրայելյան ազգի մեջ, քանի որ Քրիստոսը ծնվեց Պաղեստինում՝ Բեթղեհեմում՝ Նազարեթում, սակայն նրա պտղով լցվեց ողջ տիեզերքը: Մեկնիչը Խաչի պտուղներն է համարում հայրապետներին, քահանաներին, վարդապետներին, խաչակիր մենակյացներին, պսակված մարտիրոսներին եւ բոլոր հավատացյալներին, որոնց ճակատը դրոշմված է եւ ուլքեր «քրիստոսեանք կոչին պտուղը են քո եւ այսպիսի պտղով լի են տիեզերք»³⁹:

Այսբանով ավարտվում է մեզ հետաքրքրող մեկնողական հատվածը, որից հետո հեղինակն անդրադառնում է Խաչի տոնի կանոնին եւ տոնակատարությանը: Փաստորեն «Տոնապատճառ»-ում *Խաչի տոնի պատճառի* հեղինակը կամ խմբագիրը «Բարձրացուցեք»-ի գրության նախապատմությունից (Նախադրություն), Դավիթ Անհաղթի եւ Գյուտ կաթողիկոսի նամակներից բացի, ներառել է նաեւ «Բարձրացուցեք»-ից «Օրհնեալ ես» բառով սկսվող գոհաբանական հատվածի առաջին երկու պարբերությունների՝ «Օրհնեալ ես, աստուածագարդ քրիստոսապասկեալ փայտ սուրբ, որ միայն յանշունչս եւ ի շնչաւորս...», «Օրհնեալ ես, քրիստոսապասկեալ փայտ սուրբ, որ յերկրի բուսանելով...»⁴⁰ մեկնությունը:

Առաջին հայացքից «Տոնապատճառ»-ի այս բնագիրը թվում է, որ պետք է վերցված լիներ Ներսես Շնորհալու՝ «Բարձրացուցեք»-ի մեկնությունից: Սակայն, այն համեմատելով՝ Շնորհալու մեկնությունը պարունակող Մաշտոցյան մատենադարանի մի քանի ձեռագրերի, ինչպես նաեւ նույն երկի լատիներեն թարգմանության⁴¹ հետ, նկատեցինք, որ «Տոնապատճառ»-ում խնդրո առարկա բնագիրն ավելի ընդարձակ է եւ տարբերվում է Շնորհալու նշյալ ստեղծագործությունից: Թեև «Տոնապատճառ»-ի խմբագիրը մի շարք հատվածներում բառացիորեն կրկնում է Շնորհալուն, սակայն որոշ դրույթներ ոչ միայն ավելի մանրամասն է ներկայացնում, այլեւ արտահայտում է Շնորհալուց տարբերվող հայացքներ: Ավաճն ավելի տեսանելի դարձնելու համար

37 ՄՄ, ձեռ. 4139, թ. 349ա:

38 Հմմտ. Փիլիպ., Գ. 18:

39 ՄՄ, ձեռ. 4139, թ. 350ա:

40 «Դաւթի Անյաղթ փիլիսոփայի Մատենագրութիւնք», էջ 17-18:

41 St' u "Sancti Nersesis Clajensis Armeniorum Catholici opera nunc primum ex Armenio in Latinum conversa notisque illustrate", studio et Labore D. Josephi Cappelletti, Venetiis, typis PP. Mekhitaristarum, in insula S. Lazari, 1833, vol. II, էջ 244-323:

բերենք մեկ օրինակ: Դավիթ Անհաղթի՝ «ի մտաւորաց եւ բանաւորաց կենդանեաց»⁴² արտահայտությունը Շնորհալին մեկնում է հետևյալ կերպ. «Մտաւոր եւ բանաւոր կոչին հրեշտակք, որ անմարմին են եւ մարդիկ մարմնաւորք»⁴³: Այսինքն՝ Շնորհալին թե՛ հրեշտակներին եւ թե՛ մարդկանց համարում է մտաւոր եւ բանաւոր, առաջիններին՝ անմարմին, իսկ վերջիններին՝ մարմնաւոր: Մինչդեռ «Տօնապատճառ»-ի մեկնիչը, ինչպես տեսանք, մտաւոր եւ բանաւոր կենդանի ասելով հասկանում է բացառապէս մարդուն. «Ոմանք մտաւոր գիրեշտակս եւ բանաւոր զմարդիք ասացին, այլ հրեշտակք բոլորովին միտք են չասին մտաւորք:...այլ մտաւոր եւ բանաւոր կենդանի մարդս է»⁴⁴: Այսպիսով կարող ենք ասել, որ «Տօնապատճառ»-ի խմբագիրը Շնորհալու մեկնության հիման վրա գրել է «Բարձրացուցէք»-ի համապատասխան հատվածի մեկ այլ մեկնություն եւ զետեղել «*Խաչի տունի պատճառ*»-ի մեջ: Մենք հակված ենք կարծելու, որ «Բարձրացուցէք»-ի Նախադրությունը, Դավթի եւ Գյուտ Կաթողիկոսի նամակները «Տօնապատճառ»-ի մեջ ներմուծվել են Վարդան Հաղբատեցի-Ներսես Շնորհալի մատենագրական համագործակցության արդյունքում, ինչը, սակայն, չենք կարող ասել այս մեկնության մասին: Դժվար թե Վարդան Հաղբատեցին խմբագրեր, ձեռագիրներ իր իսկ խնդրանքով Ներսես Շնորհալու հեղինակած մեկնությունը: Ավելորդ է ասել, որ վերջինս չէր կարող գրել միեւնոյն երկի տարբեր, երբեմն իրար հակասող մտքերով մեկնություններ: Ավելի հավանական է, որ այդ հավելումը կարող էր անել Վարդան Հաղբատեցուց հետո «Տօնապատճառ»-ի հաջորդ խմբագրությունն իրականացրած Վարդան Արեւելցին, որ հայտնի է իր բազմաթիվ մեկնողական երկերով⁴⁵: Ի դեպ, Մաշտոցյան Մատենադարանի՝ միջնադարյան մեկնիչների վերաբերյալ տեղեկություններ պարունակող որոշ ձեռագրերում Վարդան Արեւելցու ստեղծագործությունների շարքում նշվում է նաեւ «Բարձրացուցէք»-ի մեկնությունը⁴⁶: Սակայն այս ամենի մասին վերջնական կարծիք կարելի է հայտնել միայն «Տօնապատճառ»-ների տարբեր խմբագրությունների, ինչպես նաեւ այդ ժողովածուի հետ առնչություն ունեցած մատենագիրների այլ ստեղծագործությունների համալիր ուսումնասիրությունից հետո, ինչին կանդրադառնանք հետագայում:

Այնուամենայնիվ, Դավիթ Անհաղթի Ս. Խաչին նվիրված ներբողի վերաբերյալ թե՛ պատմական եւ թե՛ մեկնողական բնագրերի՝ «Տօնապատճառ» ժողովածուի մեջ ներառված լինելն ինքնին հետաքրքրական երևույթ է եւ վկայում է Հայ Եկեղեցու աստվածաբանական-դավանաբանական, ծիսական եւ կրթական համակարգում այս երկի ունեցած կարեւոր դերի մասին:

42 «Դավթի Անյաղթ փիլիսոփայի Մատենագրությունք», էջ 17:

43 ՄՄ, ձեռ. 1460, թ. 35ա:

44 ՄՄ, ձեռ. 4139, թ. 349ա:

45 Տե՛ս Հ.Անապան, Հայկական մատենագիտություն. Ե.-ԺԸ. դդ., հտ. Ա., Երեւան, 1959, էջ LIX-LXI, LXIII, Փ. Անթապյան, Վարդան Արեւելցի, գիրք Ա., էջ 127-146:

46 Տե՛ս Հ.Անապան, նշվ. աշխ., էջ LX: